ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, Հեռ.՝ +374 281 22020,28125183, էլ. փոստ՝ yeghegnadzor@gmail.com

09 հոկտեմբերի 2023 թ. թիվ 1851

ՄԵԾ ՀԻՄՔ-1 ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Ա. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զաքարյան.

Եղեգնաձորի համայնքապետարանը «Մեծ Հիմք-1» ՍՊԸ–ի հետ 2021 թվականի հուլիսի 13-ին կնքել է « Եղեգնաձորի համայնքի Գլաձոր բնակավայրի 11-փողոց թիվ 9 հասցեում գոյություն ունեցող մշակույթի տան շենքի վերահատակագծում և կցակառույցի իրականացման» աշխատանքների N «ՎՁՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» գնման պայմանագիրը:

«Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի կողմից չեն պահպանվել պայմանագրով սահմանված պայմանները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 8.11 կետի պահանջը՝ այն է. Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով լուծել «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի հետ կնքված N «ՎՁՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով պայմանագիրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված կարգը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը, կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասնին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով ՝ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ–ին տրվում է 10/ տասը / օրացույցային օր՝ տուժանքով սահմանված որակավորման ապահովման 9 178200 /ինն միլիոն մեկ

հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման 6 118 800 /վեց միլիոն մեկ հարյուր տասնութ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ գումարները Եղեգնաձորի համայնքապետարանի՝ 900355101065 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարը չվճարելու դեպքում՝ «Գնումների մասնին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «Մեծ Հիմք-1» ՍՊԸ–ին, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվի մատակարարի բանկը նշած գումարները գանձելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կապ. գլխավոր մասնագետ՝ Գարիկ Սարգսյան
աշխ հեռ. +37428122020 բջջ. +37409336101